ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 սեպտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

121
(2971)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՎԱԶԴԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Իշխանության թերեւս միակ լավ գործը վիճակախաղերի գովազդի արգելքն էր, որը, սակայն, որոշ ժամանակ անց իրականացվում է ակնհայտ, բայց վիճակախաղ չենթադրող տեսքով կամ անունով: «Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ «Նոա» ֆուտբոլային ակումբի շապիկների գրվածքը, մեղմ ասած, օրենքի խախտում է: ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, 9-րդ կետի համաձայն՝ գովազդային վիճակախաղի դրամական շահումներ գովազդելը զանգվածային տեղեկատվության միջոցներով արգելվում է, սակայն «ՆՈԱ»-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում կան բազմաթիվ լուսանկարներ, որտեղ ֆուտբոլիստների շապիկին գրված է ImagineLive:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմեց «ՆՈԱ» ֆուտբոլային ակումբի գլխավոր տնօրեն Արամ Ներսիսյանին եւ փորձեց տեղեկանալ՝ ինչու է ֆուտբոլիստների շապիկին ցուցադրվում օնլայն խաղատան գովազդ, որը հեռուստատեսությամբ կամ լրատվամիջոցներով արգելվում է: Ֆուտբոլային ակումբի գլխավոր տնօրենը, ի պատասխան, սկզբում նշել է, որ հենց «ԻմեջինԼայվի» գովազդն արգելված չէ, ապա վերջում ինքն իրեն հերքել է: ««ԻմեջինԼայվ» ՍՊ ընկերության (ներառյալ վերջինիս ֆիրմային անվանման կամ ImagineLive ապրանքային նշանի) գովազդն արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ, ուստի վերջինիս գովազդն իրականացվում է «Նոա» ֆուտբոլային ակումբի եւ «Իմեջին Լայվ» ՍՊ ընկերության միջեւ գործող հովանավորչական պայմանագրի հիման վրա»: Ապա հավելում է. ««ԻմեջինԼայվ» ՍՊ ընկերությունը չի ստեղծում խաղացողների համար «որեւէ շահումով խաղի մասնակցելու հնարավորություն», չի տեղադրում ավտոմատներ խաղասրահում, չի հանդիսանում խաղատան կամ խաղասրահի օպերատոր: Վերջինիս գործունեությունը ոչ մի կապ չունի նաեւ Ձեր կողմից հիշատակված գովազդային վիճակախաղի հետ: Փոխարենը «ԻմեջինԼայվ» ՍՊ ընկերությունը կազմակերպում է ինտերնետ վիճակախաղ, որը հասանելի է դարձնում այլ ընկերությունների, որոնք իրենց հերթին զբաղվում են սպառողների թիրախավորմամբ: Հետեւաբար վերջինիս ֆիրմային անվանման եւ/կամ ապրանքային նշանի գովազդը լիովին համահունչ է ՀՀ օրենսդրության պահանջներին»: Ստացվում է, որ «ՆՈԱ» ակումբի տնօրինությունը խոստովանում է, որ, այո՛, կա նման բան, բայց.... Բայց լրատվամիջոցներից խաղաքարտերը թաքցնել անհնար է: Այսպիսով, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին անհրաժեշտ է եւս մեկ անգամ վերանայել վիճակախաղի մասին ՀՀ գովազդի խախտումները եւ արտոնություններ չտալ խաղային մոլուցք բորբոքող ընկերություններին ու սահմանափակել նրանց ախորժակը:

Ամուլը, տարբեր իրավապաշտպաններ, քրեական գործերով անցնող վկաներ բարձրաձայնել են, որ Նիկոլ Փաշինյանը քրեական հետապնդումներ է իրականացնում, տարբեր մեղադրանքներ հյուսում ընդդիմադիր անձանց նկատմամբ, որի աշխատանքները կոորդինացնում է կոնկրետ անձը՝ քրեական անցյալով հայտնի Ներսես Խաչատրյանը, ում երկու քրեական գործերի հասանելիությունը «Դատելեքսում» անհասկանալի պատճառով սահմանափակ է: Այսպես, ընթերցողին է ներկայացվում Ալավերդի քաղաքում իշխանության զավթման փաստաթղթային մասը (ֆոտո 1 տես Armlur.am կայքում), որտեղ Ներսես Խաչատրյանի «Իրավաբան էյ էմ» ՍՊԸ-ին վերապահվում է պետական կառավարման պատմության մեջ աննախադեպ լիազորություն՝ «իրավական հսկողության սահմանում Ալավերդի համայնքի սեփական լիազորությունների նկատմամբ»: Ամենաուշագրավը՝ Ալավերդի խոշորացված համայնքի իշխանազավթման ընթացքում աղաղակող իրավախախտումը, որը թույլ է տվել կառավարությանը, իր մասշտաբով եզակի է, քանզի կառավարությունը, ի դեմս Լոռու մարզպետարանի, 07.06.2023 թվականին կնքելով պայմանագիր՝ կատարել է ծառայության գնում մի ՍՊԸ-ից (ֆոտո 2 տես Armlur.am կայքում), որը այդ պահին՝ 04.08.2022. 04.08.2024 ընթացքում, գտնվել է գնումների սեւ ցուցակում (ֆոտո 3 տես Armlur.am կայքում), այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցանկում: Դիկտատուրաների պատմության ընթացքում պետական ռեպրեսիայի այս օրինակը միջազգային այն կառույցների համար է, որոնք ՀՀ իշխանություններին համարում են օրինապահ եւ դեմոկրատ: Մենք կապ հաստատեցինք Ներսես Խաչատրյանի հետ, ով հայտարարեց, որ տեղեկությունը զրպարտություն է. «Ձեր այդ զրպարտության համար, ես կդիմեմ դատարան, կհանդիպենք դատարանում»: Հ.Գ. *Նման կերպ, ի թիվս այլոց, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը ապօրինի կերպով զրկվեց իր պաշտոնից:*



Ժողովրդավարության «առաջամարտիկ» «Քաղաքացիական պայմանագիր»-ը շարունակում է թույլատրելի ու անթույլատրելի բոլոր մեթոդներով բոլոր ոլորտներում ձերբազատվել իր ընդդիմախոսներից: Նոր ձեւավորված ավագանիում երեկ արդեն երկրորդ անգամ միանգամից 3 ընդդիմադիր անդամներ զրկվեցին մանդատներից՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Գրիգոր Երիցյանը եւ ավագանու անկախ անդամներ Անուշ Գինոսյանը եւ Անույշ Խուդավերդյանը. եթե Գրիգոր Երիցյանի դեպքում նախաձեռնողը հենց ՔՊ-ն էր, ապա ավագանու մյուս անդամների դեպքում օգնության էր հասել ՔՊ-ի հավատարիմ աջակից «Հանրային ձայնը», որն իբրեւ ընդդիմադիր խմբակցություն է ներկայանում, բայց ավագանիում ՔՊ-ի համար մեկ դաշնակիցն է: Այսպիսով, ավագանին արդեն հաջորդ նիստին նոր անդամներ կունենա, մանդատից զրկված ավագանու անդամներին կփոխարինեն նորերը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Գրիգոր Երիցյանի մանդատն անցնելու է ցուցակի հաջորդ համարին՝ Վահագն Իսոյանին. վերջինս հրատարակիչ է: Մեզ հետ զրույցում «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանն ասաց, որ դեռ չեն հասցրել որեւէ քննարկում ունենալ մանդատը փոխանցելու կամ խմբակցության նոր ղեկավարի մասով: Անուշ Գինոսյանի եւ Անույշ Խուդավերդյանի մանդատները կանցնեն «Հանրային ձայն»-ի հաջորդ համարներին՝ Կարեն Սանամյանին եւ Դենիս Պողոսյանին. վերջինս Տիգրան Ուրիխանյանի «Այլյանս» կուսակցության անդամ է:

Դեռ 2023 թվականի մայիսի 30-ին դադարեցվել էր Սոթքի ոսկու բաց հանքի շահագործումը, քանի որ, ապրիլի 14-ից սկսած, հանքի ուղղությամբ Ադրբեջանի կողմից կրակահերթեր են իրականացվել: Հանքավայրի աշխատող անձնակազմը բազմիցս փորձել է անցնել աշխատանքային պարտականությունների կատարմանը, սակայն դրան խանգարել են տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից իրականացվող կրակոցները: Այս ամենից հետո Սոթքի բաց հանքում հետագա աշխատանքներ կատարելը անհնարին է դարձել, որից հետո էլ որոշում է կայացվել դադարեցնել բաց հանքի շահագործումը: ArmLur.am-ի խմբագրություն Վարդենիսի բազմաթիվ բնակիչներից ահազանգեր են ստացվում, որ Սոթքի ոսկու բաց հանքը առաջիկայում կրկին շահագործվելու է: Այս հարցի վերաբերյալ ArmLur.am-ը կապ է հաստատել «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության արտաքին կապերի եւ սոցիալ քաղաքականության գծով կառավարիչ Ռուզաննա Գրիգորյանի հետ՝ պարզելու՝ իրատեսական է ոսկու բաց հանքը կրկին շահագործելը եւ համապատասխանում են իրականությանը հանքը կրկին շահագործելու լուրերը, թե ոչ: ArmLur.am-ի հետ զրույցում Ռուզաննա Գրիգորյանը ասաց, որ նման տեղեկություններ չունի: Այսինքն, ինչ-որ շրջանակներ խաբում են վարդենիսցիներին:

ԶՐՈՒՅՑ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանի հետ:

-Պարոն Գրիգորյան, քիչ առաջ ավագանու «Հանրային ձայն» եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների նախաձեռնությամբ ավագանու երեք անդամներ զրկվել են մանդատներից:

-Նախաձեռնությունները ավագանու տարբեր խմբակցությունների էին պատկանում, համատեղ նախաձեռնություն չի եղել:

-Միայն ավագանու մեկ անդամի դեպքում նախաձեռնող է եղել՝ «Հանրային ձայն» խմբակցությունը, իսկ մյուս երկուսի դեպքում՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը: Ընդամենը ամիսներ առաջ, եթե ճիշտ եմ հիշում փետրվարին, կրկին նման նախադեպ եղավ եւ ավագանու անդամներ զրկվեցին իրենց մանդատներից: Տպավորություն է, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ը փորձում է ձերբազատվել ընդդիմադիրներից: Անգամ Ազգային ժողովում նման գործելաոճ չենք տեսնում:

-Նախ նշեմ, որ Ազգային ժողովի մասով նույնպես ականատես ենք եղել նման քննարկումների, երբ ընդդիմադիր խմբակցությունները երկար ժամանակ բոյկոտում էին նիստերը եւ բացակայում էին, սակայն, ի վերջո, որոշում կայացվեց չկիրառել գործիքակազմը. այդ մասով Ազգային ժողովի մեր գործընկերները համապատասխան մեկնաբանություններ են տվել: Ինչ վերաբերում է Ձեր մեկնաբանությանը, թե փորձում ենք «ձերբազատվել ընդդիմադիրներից», ապա նշեմ, որ տեսականորեն դա հնարավոր չէ, քանի որ, օրինակ, «Ազգային առաջընթացից»-ից կամ «Հանրային ձայն»-ից որեւէ անդամ մանդատից հրաժարվում կամ զրկվում է, ապա իրեն փոխարինում է հենց նույն ուժի ներկայացուցիչ մեկ այլ ընդդիմադիր ավագանու անդամ: Ավագանու անդամների հեռացման հիմքը իրենց բացակայությունն է՝ բուն ավագանու կամ հանձնաժողովի նիստից:

-Այսօր ավագանու՝ մանդատից զրկված անդամները նիստերին ներկա են եղել:

-Ճիշտ է ավագանու նիստերին՝ այո, սակայն հանձնաժողովի նիստերին չեն մասնակցել, ինչն էլ նշված էր զեկույցում: Նրանք նշում են, որ պետք է շրջայցեր անեն, հանդիպումներ ունենան: Դա ոչ ոք չի մերժում, թող ծանոթանան խնդիրներին, սակայն կա առնվազն երկու պարտականություն ինչն ավագանու անդամը, օրենքի համաձայն, պետք է անի. դա ավագանու եւ հանձնաժողովի նիստերին մասնակցություն ունենալն է: Ի դեպ, դրանք ամսվա ընթացքում երկու օր են լինում. ավագանու նիստերի դեպքում՝ ամիսը մեկ ամբողջ օր, իսկ հանձնաժողովի նիստերը տեւում են առավելագույնը երեք-չորս ժամ: Եթե մարդն իր նվազագույն պարտականությունները չի կատարում եւ իրեն ասում են, որ պիտի լիազորությունները դադարեցվեն, ապա ումի՞ց է բողոքում: Օրենքը նշում է, որ այս երկու պարտականություններից որն էլ չի կատարվում՝ ապա հիմք է լիազորությունների դադարեցման համար: Մենք երկար քննարկում ենք այն հարցը՝ այս որոշումները քաղաքակա՞ն են, թե՞ ոչ, սակայն չենք քննարկում, թե ինչու չեն մասնակցում նիստերին. չէ՞ որ քաղաքացիները նրանց ընտրում են:

-Այսպես ստացվում է, որ ժողովրդի ձայները հաշվի չեն առվում եւ ավագանու անդամները զրկվում են իրենց մանդատներից: Այստեղ իրավունքների խախտում չե՞ք տեսնում:

-Ոչ, չեմ տեսնում, քանի որ դա նախատեսված է օրենքով, որն էլ ընդունվում է Ազգային ժողովի կողմից, որը նույնպես ժողովրդի կողմից ընտրված մարմին է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 214

ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐ ԵՂԵԼ ԵՆ ԵՎ ԼԻՆՈՒՄ ԵՆ

2018 թ. հոկտեմբերի 20-ին՝ Լիբանանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Խոսում - ես բացառում եմ, որ ՀՀ-ում մեր կառավարության օրոք որեւէ ընտրություն կկեղծվի»:

Իրականում ՀՀ-ում քաղաքացու քվեն արհամարհող նման իշխանություն երբեք չի եղել:

Ընտրությունները կայանում են, իշխանական թեկնածուն պարտվում է ընտրություններում, որից հետո կալանավորվում է ընտրված համայնքապետը, ինչպես եղավ Վանաձորում, Վարդենիսում (ավագանին) կամ ճնշումների, խոչընդոտներ հարուցելու արդյունքում՝ կրկնակի ընտրություններ են նշանակվում, ինչպես եղավ Թալինում, Վեդիում, Սիսիանում եւ այլ վայրերում: Եվ, ի վերջո, պարզապես խլում են համայնքապետի պաշտոնը, ինչպես տեղի ունեցավ Ալավերդիում եւ Գորիսում:

Հիշեցնենք նաեւ, որ ընտրակեղծիքները մերժող ՔՊ-ն կեղծել է անգամ իր՝ կուսակցության ներսում անցկացված ընտրությունների արդյունքները: «Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ 2022 թ. հոկտեմբերի 29-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վեցերորդ համաժողովը: Ներկա 1060 պատվիրակներն ընտրել են վարչության 15-հոգանոց կազմ: Հետո աղմուկ է բարձրացել, որ ՔՊ-ի ներսում քվեարկությունը կեղծվել է եւ տեղի է ունեցել ձայների վերահաշվարկ: Արդյունքում, փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը եւ խորհրդանում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, փաստորեն, կեղծիքով են ընտրվել վարչության կազմում: Նրանք դուրս են մնացել, եւ նրանց փոխարեն վարչության կազմը համալրել են Արսեն Թորոսյանը եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանը, որոնց օգտին տրված ձայները կեղծվել էին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ գործել է ընտրակեղծարարների թիմ: Իսկ ընտրակեղծիքների մասին առաջինը հայտնել էր հենց Արսեն Թորոսյանը եւ պահանջել վերահաշվարկ, որի արդյունքում էլ դարձել էր վարչության անդամ:

ԱՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղունցը հանդես է եկել հայտարարությամբ.

«Արձագանքելով ՀՀ ԱԺ նախագահ Ա. Սիմոնյանի երեկվա հայտարարությանը՝ միջխորհրդարանական հանձնաժողովի ֆորմատը լուծարելու մասին, կուզենայի նախ մեջբերել Մարկ Տվենի հետեւյալ տողերը՝ «Իմ (ԱՀ ԱԺ) մահվան մասին լուրը խիստ չափազանցված է»:

Ինչ վերաբերում է ԱՀ ԱԺ գործունեությանը՝ 2023 թ. սեպտեմբերին տեղի ունեցած էթնիկ զտումից հետո, նշեմ, որ ԱՀ ԱԺ պաշտոնյաները/ պատգամավորները/, ստանալով Արցախի ժողովրդի քվեն 5 տարի ժամկետով, շարունակում են ստեղծված իրավիճակում պատասխանատվություն կրել արցախահայության ճակատագրի վերաբերյալ եւ հնարավոր բոլոր ջանքերը գործադրել անվտանգության երաշխիքների ներքո ապահովելու նրանց հավաքական վերադարձը հայրենիք:

ՀԳ 1. Ինչ վերաբերում է միջխորհրդարանական հանձնաժողովի ֆորմատը լուծարելուն, ապա դրա համար կան արձանագրված համապատասխան մեխանիզմներ:

ՀԳ 2. Ի դեպ ԱՀ ԱԺ միջխորհրդարանական ու բարեկամական խմբերի աշխատանքներն ու հարաբերությունները շարունակվում են Ֆրանսիայի, Կիպրոսի, Հունաստանի, Բելգիայի եւ այլ երկրների խորհրդարանականների եւ խմբերի հետ»:

ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏՎԵԼ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ

«Արդարադատության նախարարությունը սահմանազատման գործընթացի վերաբերյալ օգտագործել էր սահմանի վերարտադրություն բառը, հրապարակավ հարցում էի ուղարկել՝ ի՞նչ է նշանակում սահմանի վերարտադրություն պատասխանել էին՝ փակ, գաղտնի նամակով»: Այս մասին ԱԺ նիստում կառավարության կողմից ներկայացված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Բովանդակության մասին չեմ ուզում խոսել, բայց այդ հարցը հանրայնացնելը.... Ես թերթել եմ օրենսդրությունը, չկա այդ բառը, դա գաղտնիքի բացահայտո՞ւմ է, թե՞ չէ, եւ ինչո՞ւ են ուղարկել փակ նամակով: Կա չափորոշիչ, թե ինչու էին մի պարզ հարցի պատասխանում փակ նամակով...»- ԱԱԾ տնօրենի տեղակալ Անդրանիկ Սիմոնյանից հետաքրքրվեց ընդդիմադիր պատգամավորը:

Վերջինս նշեց, որ փոփոխությունները դեռ չեն գործում: «Այսինքն, այս պահին այդ կարգավորումները գոյություն չունեն օբյեկտիվորեն, հետեւաբար, ես ենթադրում եմ՝ պատասխան նամակի տեղեկությունները գաղտնիք են ենթադրել, դրա համար գաղտնագրել են», - նշեց ԱԱԾ փոխտնօրենը:

440 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Շվեդիան Կիեւին հատկացրել է 4,6 միլիարդ շվեդական կրոն (440 միլիոն դոլար) օգնության նոր փաթեթ: Այս մասին ասվում է Շվեդիայի կառավարության կայքում տեղադրված հաղորդագրության մեջ:

«Երեկ՝ սեպտեմբերի 9-ին, Շվեդիայի կառավարությունը ներկայացրել է Ուկրաինային ռազմական օգնության 17-րդ փաթեթը, որը կազմում է 4,6 միլիարդ շվեդական կրոն: Այն ներառում է նյութական նվիրատվություններ, գնումներ արտադրության կարիքների համար, նյութական միավորներ եւ ֆինանսական ներդրումներ», - նշվում է փաստաթղթում:

Հստակեցվում է, որ օգնության փաթեթը ներառում է Robot System 70 հրթիռային համակարգեր, վեց CB90 դասի մարտական նավակներ եւ այլն:

ԱՌԱՋՆՈՐԴԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ աս-Սիսին կոչ է արել ամեն ինչ անել Գազայի հատվածում զինված հակամարտությունը դադարեցնելու եւ Հորդանան գետի Արեւմտյան ափում ներկայիս սրումը դադարեցնելու համար:

Այս մասին նա հայտարարել է Կահիրեում Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ հանդիպման ժամանակ:

«Տարածաշրջանում շարունակվող էսկալացիան մեծ վտանգ է ներկայացնում: Միջազգային հանրությունը եւ ԵՄ-ն պետք է բոլոր ջանքերը գործադրեն համաձայնության հասնելու Գազայի հատվածում պատերազմը դադարեցնելու եւ Արեւմտյան ափում էսկալացիան դադարեցնելու համար: Միայն դա կօգնի նվազեցնել լարվածությունը Մերձավոր Արեւելքում եւ վերականգնել տարածաշրջանային կայունությունը», - Եգիպտոսի նախագահի խոսքերը «Ֆեյսբուք»-ի իր էջում մեջբերել է նրա պաշտոնական ներկայացուցիչ Ահմեդ Ֆահմին:

Եգիպտոսի նախագահը հավելել է, որ անհրաժեշտ է համարում որքան հնարավոր է շուտ դադարեցնել հումանիտար աղետը Գազայում:

Բորելն էլ իր հերթին խորին երախտագիտություն է հայտնել Եգիպտոսի իշխանություններին նման կրիտիկական փուլում Մերձավոր Արեւելքում իրավիճակի կայունացմանն ուղղված ջանքերի համար:

Կողմերը պայմանավորվել են շարունակել ջանքեր գործադրել տարածաշրջանում էսկալացիայի մակարդակը նվազեցնելու նպատակով:

ԻՆՉՈՒ ԷԻՆ ՆԵՐԿԱ ՆԻՍՏԻՆ

ԱՆ-Ն ԵՎ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԻՆԸ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Սեպտեմբերի 9-11-ը Երեւանում տեղի է ունենում «Երեւանյան երկխոսություն» միջազգային համաժողովը:

Այս տարի համաժողովը նվիրված է 5 հիմնական թեմայի, դրանք են ստեղծվող միջազգային կարգեր, լոգիստիկա եւ տրանսպորտ, կանաչ անցում եւ էներգետիկայի ապագան, թվային հասարակությունները որպես կայուն եւ ապահով տնտեսական շարժիչ, աշխատանքի ապագան:

Երեկ՝ սեպտեմբերի 10-ին, համաժողովին ներկա են գտնվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, արտաքին գործերի նախարար Արարատ Միզոյանը իր կնոջ հետ եւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Ուշադրություն դարձնելով թեմաներին՝ նկատում ենք, որ համաժողովի ժամանակ չկա որեւէ առողջապահական թեմա, որը կարող էր առնչվել Անահիտ Ավանեսյանի հետ, ու այս անգամ կրկին փորձում է հաճոյանալ ՀՀ վարչապետին՝ աչքաթող անելով առողջապահական մի շարք հարցեր:

Նույն կերպ զարմանալի է Արարատ Միրզոյանի կնոջ՝ Գոհար Աբաջյանի ներկայությունը համաժողովին: Նկատելի է, որ բոլոր նախարարները եկել են միայնակ, իսկ Արարատ Միրզոյանը իր կնոջ հետ, թեպետ նա նույնպես որեւէ աղերս չունի համաժողովի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՀՀ առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանի հետ՝ հասկանալու՝ ինչ կապ ունի Անահիտ Ավանեսյանը համաժողովի հետ, վերջինս ասաց. «Տիկին նախարարը ստացել է հրավեր եւ մասնակցել է միջոցառմանը: Նա քաղաքական, հանրային գործիչ է, եւ արտառոց բան այստեղ չեմ տեսնում: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ այլ նախարարներ, նրա՞նց էլ եք հարցնելու՝ ինչու են մասնակցել, թե՞ դարձյալ թիրախում Անահիտ Ավանեսյանն է»:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել նաեւ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանի հետ հասկանալու համար՝ Արարատ Միրզոյանի կինը ինչպես է հայտնվել այնտեղ, եւ նա ինչ կապ ունի համաժողովի հետ, սակայն այդպես էլ մեզ չհաջողվեց կապվել նրանց հետ, քանզի «Ժողովուրդ» օրաթերթի զանգերն անպատասխան էին մնում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐՉԱԽՄԲԻ ԱՅՑԸ ⇨ ԿԱՆԱԴԱ ԱՆՑԱՆԿԱԼԻ Է

ՀՅԴ Կանադայի Կենտրոնական կոմիտեի հայտարարություն է տարածել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի՝ Կանադա այցելության առիթով.

«Միջպետական հարաբերությունների զարգացման շրջանակներում սեպտեմբերի 25-30-ը նախատեսվում է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ԱԺ պատվիրակության այցելությունն Օտտավա: Մտահոգիչ է տեղեկանալ, որ Ալեն Սիմոնյանի պատվիրակության կազմում ներառված են միայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցության անդամները՝ առանց ընդդիմության պատգամավորների: Հայաստանի Ազգային ժողովի Հայաստան-Կանադա խորհրդարանական բարեկամության խմբակցության ընդդիմադիր պատգամավորները միտումնավոր դուրս են մնացել այս պատվիրակությունից: Այս երեւույթն ինքնին ժողովրդավարական կանոնակարգի խախտում է:

Ժողովրդավարության տարրական սկզբունքներն ու մարդու հիմնական իրավունքները ոտնահարող ՀՀ գործող վարչախմբի այցելությունը ողջունելու մտադրություն չունի կանադահայությունը: Գործող վարչախմբի՝ ընդդիմադիր ցուցարարների նկատմամբ անհամաչափ ուժի օգտագործմամբ գործելաձեւը հակասում է ժողովրդավարության սկզբունքներին: Այս բոլորը դատապարտելի արարքներ են ժողովրդավարության դրոշակակիր Կանադայում ապրող ժողովրդի համար:

Վարչախմբի կողմից որդեգրված ապազգային քաղաքականության հետեւանքով աններելի նահանջ է արձանագրվում մեր ազգային կենսական շահերի նկատմամբ: Արցախի հիմնախնդիրը վերստին միջազգային օրակարգ բերելու հնարավորության ուղիների որոնման հետամուտ հայ դատի հանձնախմբերի աշխատանքները խափանող Ալեն Սիմոնյանն ու ՔՊ-ական գործող վարչախումբը հետեւողական գիջումներով, սահմանազատման ապօրինի եւ անձնատվողական գործընթացով, դարձել են թուրք-ադրբեջանական քաղաքական օրակարգի կամակատարը:

Մենք համոզված ենք, որ Հայաստանի գործող վարչախումբն իրավունք չունի որոշելու Արցախի կարգավիճակի ճակատագիրը եւ նախորոշելու Հայաստանի ինքնիշխան սահմանները, եւ առ այդ, վերստին դատապարտելով իրենց ազգակործան ընթացքը, առաջիկա օրերին Կանադա ժամանող վարչախմբի կազմը նկատվում է անցանկալի պատվիրակություն»,-ասված է հայտարարության մեջ:

ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւանի ավագանու անկախ անդամներ Անուշ Գինոսյանին եւ Անույշ Խուդավերդյանին նույնպես զրկեցին մանդատից (տե՛ս ավելի մանրամասն էջ 2):

Այս անգամ գործընթացի նախաձեռնողը «Հանրային ձայն» խմբակցությունն էր:

Ավագանու անդամներին մանդատից զրկելու որոշմանը կողմ քվեարկեցին ՔՊ, «Հանրային ձայն» եւ «Հանրապետություն» խմբակցությունները, ընդդիմությունը չմասնակցեց քվեարկությանը:

Մանդատից զրկվեց նաեւ Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Գրիգոր Երիցյանը:

Այս որոշմանը կողմ քվեարկեց ավագանու 33 անդամ:

Գործընթացը նախաձեռնել էր ավագանու ՔՊ խմբակցության անդամ Մարատ Թոխյանը:

Հիշեցնենք, որ որպես մանդատից զրկելու հիմնավորում ասվում է, որ նա մեկ նստաշրջանի ընթացքում բացակայել է հանձնաժողովի նիստերի կեսից:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ԿՆՈՋԸ

ՊԱՀԱՆՋԵԼ ԵՆ ՓՐԿԱԳԻՆ՝ ՉՈՐՍ ՄԼՆ ԴՈԼԱՐ

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 14:58-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած անձը հայտնել է, որ Աբովյանի խճուղում գտնվող լողավազանի մոտ կեսօրին իր օտարերկրացի բարեկամուհուն են մոտեցել ԱԱԾ գրառմամբ հագուստով 2 հոգի եւ, ոչինչ չասելով, «ԲՄՎ-ով» նրան տարել են անհայտ ուղղությամբ: Զանգողը ենթադրել է, որ բարեկամուհուն առեւանգել են, քանի որ, ըստ իր ճշտումների՝ վերջիններս ԱԱԾ աշխատակիցներ չէին:

Հաղորդումը փոխանցվեց ոստիկանության Մաշտոցի բաժին: Ահազանգողից ընդունվեց հաղորդում, կազմված փաստաթղթերն ուղարկվեցին քննչական բաժին: Նախաձեռնվեց քրեական վարույթ եւ ոստիկանները Քննչական կոմիտեի գործընկերների հետ սկսեցին հանցագործության բացահայտման աշխատանքները: Իրավապահները հաստատեցին, որ, իսկապես, «ԲՄՎ»-ով կնոջը տարած մարդիկ Ազգային անվտանգության ծառայության հետ ոչ մի կապ չունեն, իսկ որ կատարվածը շորթման նպատակով կատարված անձի առեւանգում է՝ հաստատվեց հաջորդ օրը:

«Կնոջն առեւանգելուց հետո՝ հաջորդ օրը, նրա ամուսնու հետ կապ են հաստատում «Վոթսափ» եւ «Տելեգրամ» հավելվածների միջոցով, որոնք գրանցված էին օտարերկրյա պետություններում գրանցված բջջային օպերատորների կողմից տրամադրված հեռախոսահամարներով: Տուժողի ամուսնուց պահանջել են փրկագին՝ չորս միլիոն դոլար, որը պետք է փոխանցվեր կրիպտոարժույթի միջոցով»,-ներկայացնում է ՔՈԳՎ ՕՀՏ ՀՀԴՊ վարչության պետի տեղակալ Արմեն Աբրահամյանը: Ու քանի որ հանցագործության ընթացքում օգտագործվել էին հեռահաղորդակցության համակարգեր եւ փրկագին ստանալու համար տրամադրել էին կրիպտոդրամապանակներ, բացահայտմանը միացավ ՔՈԳՎ կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ստորաբաժանումը:

Մասնավորապես պարզվեց, որ կազմակերպիչը՝ Երեւանի բնակիչ 37-ամյա տղամարդը, առեւանգմանը նախորդող օրերին՝ օգոստոսի 15-ին, 22-ին, 25-ին եւ 30-ին այցելել է Տավուշի մարզի Ոսկեպար գյուղ, իսկ առեւանգումից հետո՝ սեպտեմբերի 5-ին կարճ ժամանակով լքել է հանրապետության տարածքը, իսկ 7-ին՝ կրկին հայտնվել Ոսկեպարում:

Ճշտվեց, որ օգոստոսի 30-ին եւ սեպտեմբերի 7-ին կազմակերպիչը Ոսկեպար մեկնել է հանցավոր խմբի մեկ այլ անդամի՝ Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղի 42-ամյա բնակչի հետ: Պարզվեց նաեւ, որ հանցագործության կազմակերպմանն ու իրականացմանը մասնակցած մեկ այլ երեւանցի՝ Նորաշեն թաղամասի բնակիչ 38-ամյա տղամարդը, սեպտեմբերի 5-ի գիշերը Բագրատաշենով մտել է Վրաստան, այնտեղ ձեռք բերել վրացական հեռախոսահամարներ, «Վոթսափ» եւ «Տելեգրամ» համակարգերում գրանցել անհատական հաշիվներ, որոնց միջոցով էլ նամակագրություն է վարել առեւանգված կնոջ ամուսնու հետ:

«Կազմակերպչի անձը պարզելուց հետո ՔՈԳՎ եւ ոստիկանության մյուս ստորաբաժանումների հետ համատեղ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հնարավոր դարձավ պարզել հանցագործությանը ներգրավված մյուս անձանց ինքնությունը: Կարճ ժամանակ անց հաջողվեց պարզել նաեւ այն հասցեն, որտեղ պահվում էր առեւանգված կինը»,-ներկայացնում է ՔՈԳՎ ՕՀՏ ՀՀԴՊ վարչության պետի տեղակալ Արմեն Աբրահամյանը:

Հետագա մանրակրկիտ ուսումնասիրություններով պարզվեց, որ առեւանգելուց հետո կնոջը տեղափոխել են Նոյեմբերյան-Ազատամուտ ավտոճանապարհին՝ Ոսկեպար գյուղի սկզբնամասում գտնվող մի շինություն:

Սեպտեմբերի 8-ին, մինչ ոստիկանների մի խումբ մեկնում էր պատանդառված կնոջը գտնելու, ոստիկանների բռնող խումբը երեկոյան ժամը 5-ի սահմաններում հանցավոր խմբի երեք անդամների հայտնաբերեց մայրաքաղաքի Իսակովի պողոտայում եւ, «ԲՄՎ» մակնիշի մեկ այլ մեքենայով հանդերձ, նրանց տեղափոխեց ոստիկանություն: Նույն օրը, ժամը 19.30-ին, Ոսկեպար գյուղի սկզբնամասում գտնվող շինությունում ձերբակալվեց կնոջը ազատազրկած պահող 41-ամյա մեկ այլ երեւանցի:

Ոսկեպարում ձերբակալվել է նաեւ շինությունը փաստացի տնօրինող «Կադո» մականվամբ 49-ամյա տղամարդը: Նույն շինության մեջ էր նաեւ պատանդառված կինը: Ձեռնարկվում են միջոցներ՝ առեւանգմանը մասնակցած եւս մեկ անձի՝ Երեւանի Նորաշեն թաղամասի բնակիչ 38-ամյա տղամարդուն հայտնաբերելու ուղղությամբ:

Ք.Մ.

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 9-ից 10-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 92 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 28, մարմնական վնասվածք պատճառելու, ֆիզիկական ներգործության եւ թմրանյութի հայտնաբերման՝ 9-ական, հոգեկան ներգործության՝ 7, խարդախության՝ 5, փաստաթղթի կեղծիքի՝ 3, խուլիգանության, պաշտոնական լիազորությունների չարաշահման, թմրանյութի իրացման ու սառը զենքի հայտնաբերման՝ 2-ական, սպանության փորձի, անձնական ունեցվածքի գողության, պետական ունեցվածքի գողության, բնակարանային գողության, շորթման, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, զենք-զինամթերքի առգրավման, աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու, հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու, դատական ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու, շինարարական, լեռնահանքային աշխատանքի անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելու եւ աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է մարդու առեւանգման 1 դեպք:

Հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել՝4-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար, 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Ս. ԲԱԴԱՍՅԱՆԻՆ ԱԶԱՏԵՑԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր է ստորագրել Սասուն Բադասյանին 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատելու մասին:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, Սասուն Բադասյանին ազատել 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից», - նշված է Խաչատուրյանի ստորագրած հրամանագրում:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆԽՎԵԼ Է ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Սեւան» տարածքային բաժնում ստացվել էին տեղեկություններ այն մասին, որ փորձ է արվելու փաթեթի ներնետման միջոցով «Սեւան» քրեակատարողական հիմնարկ արգելված իրեր անցկացնել:

Իրացնելով ստացված տեղեկությունները՝ նույն բաժնի ծառայողները հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողների հետ միասին սեպտեմբերի 9-ին իրականացրել են տեղանքի զննություն: Արդյունքում՝ ժամը 01:40-ի սահմաններում ծառայողները հայտնաբերել են ներնետված փաթեթը, որում առկա են եղել 3 բջջային հեռախոս, 2 USB լար եւ 2 զույգ անլար ականջակալ:

Դեպքի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ արգելված իրերի պատկանելիությունը բացահայտելու ուղղությամբ:

ՏՂԱՄԱՐԴԸ ՓՈՐՁԵԼ Է ՍՊԱՆԵԼ ԿՆՈՋԸ

Սեպտեմբերի 9-ին՝ ժամը 12:30-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգել Վիլնյուսի փողոցի բնակիչ 26-ամյա մի աղջիկ եւ հայտնել, որ 73-ամյա պապը դանակով եւ զենքով սպառնացել է 70-ամյա տատիկին:

Պարզվել է, որ 73-ամյա տանտերը զենքով եւ դանակով փորձել է սպանել կնոջը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Նոր Նորքի բաժնի եւ Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցության վարչության ընտանեկան բռնության կանխարգելման բաժնի ծառայողներից կազմված օպերատիվ խումբն անմիջապես մեկնել է Նոր Նորքի 7-րդ զանգվածի նշված հասցե:

Ոստիկանները թակել են նշված բնակարանի դուռը, ներկայացել, ինչից հետո 73-ամյա տանտերը բացել է դուռը եւ ատրճանակի նմանվող առարկան մարտական վիճակի բերելով՝ պահել ոստիկանության ծառայողների ուղղությամբ, սպառնացել, որ կսպանի: Այնուհետեւ ոստիկանների պատսպարվելուց հետո նա փակել է բնակարանի դուռը:

73-ամյա տղամարդը չի ենթարկվել ոստիկանների օրինական պահանջին, նաեւ այդ ընթացքում ոգելից խմիչք է օգտագործել: Ի վերջո, նրա 49-ամյա որդու ուղեկցությամբ ոստիկանները ներս են մտել բնակարան եւ վնասազերծել 73-ամյա տղամարդուն: Նա, լինելով ալկոհոլի ազդեցության տակ, նախ տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, ապա բուժօգնություն ստանալուց հետո ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Նոր Նորքի բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 92 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԵՐԿՄՏԱՆՔ

Ադրբեջանի հետ սահմանը պաշտպանող, ամսվա կեսը առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող աշխարհազորի աշխատավարձը 180 հազար դրամից դարձրին 120 հազար դրամ: Դրանից հետո Նոյեմբերյանի սահմանագոտում ծառայող աշխարհազորայինների մոտ կեսը թողել է ծառայությունը: Աշխարհազորայիններն ասացին, որ մնացածներն էլ երկմտանքի մեջ են՝մնալ, թե թողնել մարտական ծառայությունը: Պաշտոնյաներին միլիարդավոր դրամ պարգեւավճարներ բաժանող իշխանությանը աշխարհազորի 180 հազար դրամ աշխատավարձը շատ մեծ է երեւացել:

ՈՍԿԵՊԱՐԻՑ ԱՐՑԱԽՑԻ 5 ԸՆՏԱՆԻՔ Է ՀԵՌԱՑԵԼ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից տեղեկացանք, որ սահմանազատման անվան տակ Ադրբեջանին սահմանամերձ տարածքները հանձնելուց հետո Ոսկեպարից հեռացել է 5 ընտանիք, որոնցից 3-ը անցյալ տարի Արցախից բռնագաղթած, Ոսկեպարում հաստատված ընտանիքներ էին: Այդ 3 ընտանիքները տեղափոխվել են Արմավիրի մարզի Ամասիա գյուղ: Ոսկեպարից հեռացած 2 ընտանիքներից մեկը տեղափոխվել է Ռուսաստան, մյուսը՝ Երեւան: Երեւան տեղափոխված ընտանիքը նպատակ ունի այդտեղից տեղափոխվել հեռավոր արտերկիր:

ԼԱՐԵԼ Է ԻՐԱՐ ԴԵՄ

Կիրանց գյուղից հայտնեցին, որ վերջերս Կիրանցի հարեւան Աճարկուտ գյուղի «Սերգելկուտ» տեղանքում Կիրանցի բնակիչների քեֆ է եղել: Կիրանցի բնակիչներից մեկը, որի եղբայրը զոհվել է 1990-ական թվականների ազատամարտում, կենացի բաժակ բարձրացնելով՝ շատ թունդ հայհոյել է նրանց, ովքեր հերոսների արյունով հեղված Կիրանցի հողերն Ադրբեջանին հանձնելու համար գրավոր հրաժարվեցին սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերից, դրա դիմաց ստանալով ֆինանսական փոխհատուցում: Այդ քեֆի սեղանի շուրջ եղել են փոխհատուցում ստացած Կիրանցի բնակիչներ, սակայն ոչ ոք չի հակադարձել կենաց ասողին: Հայրենիքի պաշտպանության մարտերում իրենց ընտանիքներից զոհեր ունեցող Կիրանցից 11 ընտանիք, չնայած իշխանության կողմից ամեն տեսակի ճնշումներին, հրաժարվել է Ադրբեջանին հանձնված իրենց հողերի դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստանալ: Փոխհատուցում ստացողների մեջ էլ լարվածություն կա, քանզի հայտնի չէ, թե ինչ սկզբունքով է որոշվել յուրաքանչյուրին տրված դրամական փոխհատուցման չափը: Դա կատարվել է կառավարության գաղտնի որոշմամբ: Կիրանցից հայտնել են, որ սահմանազատման անվան տակ ապօրինի կերպով Ադրբեջանին են հանձնվել Կիրանցի բնակիչներին պատկանող, կադաստրից տրված սեփականություն իրավունքի վկայական ունեցող 58 անշարժ գույք:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՎՔԵՐ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՏԱՐԱԾՔԸ

ՆԱԽԿԻՆ ՀՈՍՊԻՏԱԼԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՐԿՆԱՔԵՐ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Երեւանում՝ Օրբելի-Բաղրամյան փողոցների խաչմերուկում՝ զինվորական հոսպիտալի նախկին շենքի տարածքում, նոր թաղամաս է կառուցվելու:

Թաղամասն ունենալու է 5 բազմահարկ շենք 35 հարկանի երկնաքերեր: Օրբելի-Բաղրամյան խաչմերուկում երկնաքերներ կառուցողը «Ռենշին» ընկերությունն է: Նախագծման աշխատանքները, ինչպես տեղեկանում ենք Ռենշին ընկերության պաշտոնական կայքից, կատարել են արտասահմանյան ընկերություններ, նշված է. «Ինժեներիա՝ ARUP՝ ինժեներաշինարարական լուծումներում համաշխարհային առաջատարներից, ճարտարապետությունը՝ միջազգային Laguarda.low ընկերությանկողմից»:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ «Ռենշին» քաղաքաշինական ներդրումային ընկերությունը անմիջական կապ ունի ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հետ: Ինքը՝ փոխվարչապետը, խուսափում է որեւէ արձագանք տալ, հերքել կամ հաստատել, սակայն, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, Մհեր Գրիգորյանի հովանավորչությամբ է «Ռենշին» ընկերությունը հաջողություններ գրանցում կառուցապատման ոլորտում:

«Ռենշին» ՍՊԸ-ն երկու բաժնետեր ունի՝ Արայիկ Կարապետյանը եւ Էդուարդ Մարությանը. նրանք հավասարապես տիրապետում են ընկերության բաժնետոմսերին 50/50 մասնաբաժիններով:

Հավելենք, որ զինվորական հոսպիտալի նախկին շենքն օտարվել է 2020 թվականին, եւ գույքի գնահատված արժեքը, 2020 թվականի հուլիսի 8-ի դրությամբ, կազմում է 7 մլրդ 716 մլն ՀՀ դրամ՝ գրեթե 19 մլն ԱՄՆ դոլար:

Համաձայն 2020 թվականի կառավարության որոշման՝գնորդը պարտավորվելու է պահպանել արժեք ներկայացվող կառույցների ճարտարապետական տեսքը՝ դրանք միայն վերանորոգելով ու հարդարելով:

Փոխարենը հնարավորություն է ունենալու հոսպիտալի ներկայիս գլխավոր մասնաշենքի աջ եւ ձախ հատվածամասերում մինչեւ 12 հարկանի շինություններ կառուցելու, սակայն այժմ նախագիծը ենթադրում է 35 հարկանի 5 երկնաքեր: Արդյոք սա նորմերի խախտում չէ՞... հարցական է:

Հիշեցնենք նաեւ, որ խորհրդային տարիներին Հայաստանում եղել է 2 զինվորական հոսպիտալ՝ Երեւանի եւ Գյումրու կայազորային հոսպիտալները:

Արցախյան պատերազմի տարիներին, սակայն, ՀՀ իշխանությունն Օրբելի փողոցի վրա գտնվող երեւանյան հոսպիտալի պայմաններն անբավարար համարեց զինվորականներին անհրաժեշտ բուժօգնություն ցույց տալու համար: Փոխարենը որոշվեց կենտրոնական նոր հոսպիտալ ստեղծել նախկին երկաթգծի հիվանդանոցի բազայի վրա: Իսկ Օրբելու հոսպիտալը հանձնվեց Հայաստանում տեղակայված ռուսական ռազմական ուժերին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

«Ս. ՓԱՐԱՋԱՆՈՎ 100». ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ սեպտեմբերի 10-12-ը կանցկացնի «Սերգեյ Փարաջանով-100» խորագրով միջազգային գիտական կոնֆերանս:

Գիտական կոնֆերանսի նպատակն է ներկայացնել փարաջանովագիտության արդի վիճակը, քննության առնել հայ նշանավոր կինոռեժիսորի ստեղծագործական գործունեությունը, արժեւորել նրա թողած ժառանգությունը, բացահայտել Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության դերն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային կինոարվեստում:

Գիտությունների ազգային ակադեմիայում կոնֆերանսի աշխատանքներին կմասնակցեն Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի, Լեհաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Սերբիայի, ԱՄՆ-ի միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ եւ երիտասարդ հետազոտողներ:

Կոնֆերանսի շրջանակում ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի կունենան Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ուսումնասիրության հարցերին նվիրված եւ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ Սերգեյ Փարաջանովի հոբելյանին ընդառաջ հրատարակված հայ ականավոր կինոգետ Կարեն Քալանթարի "Очерки о Сергее Параджанове" աշխատության 2-րդ հրատարակության (Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստան, 2023 թ.), պրոֆեսոր Սուսաննա Դավթյանի «Տոն, որ միշտ քեզ հետ է» եռալեզու՝հայերեն, ռուսերեն եւ անգլերեն աշխատության (Երեւան, 2024 թ.), Tribute to Sergei Parajanov. On the centenary of his birth հոդվածների ժողովածուի (խմբագիր՝ պրոֆեսոր Մարեկ Սոկոլովսկի, Պոզնան (Լեհաստան, 2024 թ.) շնորհանդեսները:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

ՀՀ դպրոցականները 1-ական արծաթե եւ բրոնզե մեդալների են արժանացել Ինֆորմատիկայի միջազգային 36-րդ օլիմպիադայում, որն անցկացվել է սեպտեմբերի 1-8-ը Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:

Օլիմպիադային մասնակցել է 96 երկրի 370 աշակերտ: Յուրաքանչյուր երկիր կարող էր ներկայացնել առավելագույնը 4 աշակերտ:

Օլիմպիադային Հայաստանի թիմը ներկայացրել են Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Հակոբ Այվազյանը, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Ծովակ Եգորյանը, Քվանտ վարժարանի աշակերտներ Ալեքս Գրիգորյանը (10-րդ դասարան) եւ Գագիկ Գեւորգյանը (11-րդ դասարան): ՀՀ թիմն արժանացել է 1-ական արծաթե (Գագիկ Գեւորգյան) եւ բրոնզե (Ծովակ Եգորյան) մեդալների, ինչպես նաեւ 2 գովասանագրերի (Հակոբ Այվազյան ու Ալեքս Գրիգորյան): Օլիմպիադան անցկացվել է 2 փուլով. յուրաքանչյուրում՝ 3-ական առաջադրանք:

Հայաստանի թիմը ղեկավարել են ԵՊՀ դասախոս Արմեն Անդրեասյանը եւ ուսանող Սամվել Անդրեասյանը:

Հիշեցնենք, որ 2023 թ. Հայաստանի թիմը Ինֆորմատիկայի 35-րդ օլիմպիադայում, որն անցկացվել էր Հունգարիայում, արժանացել էր 3 բրոնզե մեդալների:

Տեղեկացնենք, որ «Ինֆորմատիկա» առարկայի միջազգային օլիմպիադայով ավարտվել են 2023-2024 ուսումնական տարվա 7 հիմնական բնագիտական առարկաների միջազգային օլիմպիադաները, որոնց մասնակցել է հանրապետության 8 կրթօջախի 29 աշակերտ: Նրանք արժանացել են 1 արծաթե եւ 18 բրոնզե մեդալների (մաթեմատիկա՝ 5 բրոնզ, քիմիա՝4 բրոնզ, ֆիզիկա՝3 բրոնզ, աստղագիտություն՝3 բրոնզ, կենսաբանություն՝2 բրոնզ, ինֆորմատիկա՝ 1 արծաթ եւ 1 բրոնզ, աշխարագրություն՝ առանց մեդալների): Կրթօջախներից մեդալների են արժանացել «Քվանտ» վարժարանը (1 արծաթ եւ 4 բրոնզ), Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը (10 բրոնզ), Վանաձորի մաթեմատիկական եւ բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը (2 բրոնզ), ՀԱՊՀ ավագ դպրոցը (1 բրոնզ) եւ Սեւանի ավագ դպրոցը (1 բրոնզ): Նախորդ՝2022-2023 ուսումնական տարում ՀՀ աշակերտներն արժանացել էին 1 ոսկե, 4 արծաթե եւ 14 բրոնզե մեդալների:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ ԻՋԵՑՎԵԼ Է

Սեպտեմբերի 10-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 7.50 %,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 9.00 %,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6.00 %:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանի մասնակցությամբ մամուլի ասուլիսը տեղի կունենա այսօր՝ ժամը 14:00-ին, եւ ուղիղ եթերով կհեռարձակվի ՀՀ ԿԲ յութուբյան ալիքով եւ ֆեյսբուքյան էջով:

ՄԵՂՐԻԻ ԱՆՑԱԿԵՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Պետական եկամուտների կոմիտեում Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման եւ արդիականացման ծրագրի շրջանակում, տեղի է ունեցել հանդիպում՝ ծրագրի ՊԵԿ պատասխանատուների եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ու ծրագրի իրականացման գրասենյակի ներկայացուցիչների միջեւ: Մասնակցել են նաեւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի թիմի անդամները:

Հանդիպման ընթացքում քննարկվել է Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման եւ արդիականացման ծրագրի իրականացման ընթացքը: Ներկայացվել են ծրագրի շրջանակում արձանագրված նշանակալի ձեռքբերումները եւ առաջիկա քայլերը՝ վերահաստատելով արդյունավետ համագործակցությունը շարունակելու կողմերի պատրաստակամությունը:

Հանդիպմանը հաջորդել է աշխատանքային այց Մեղրիի սահմանային անցակետ՝ ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները եւ առաջընթացը գնահատելու, ինչպես նաեւ շինհրապարակում կատարվող աշխատանքների ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով:

Անցկացվել են հանդիպումներ նաեւ կապալառուի, վերահսկող ինժեներ ներկայացուցիչների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ քննարկելու ընթացիկ խնդիրները, հետագա անելիքներն ու քայլերը:

Ավարտին բոլոր կողմերը վերահաստատել են Մեղրիի սահմանային անցակետի հաջող արդիականացման հանձնառությունը:

Հիշեցնենք, որ Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման եւ արդիականացման շինարարական աշխատանքները կավարտվեն 2026 թվականին, որի արդյունքում կունենանք միջազգային չափանիշներին համահունչ ժամանակակից անցակետ:

«ԻԴՐԱՄ» Գ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանը անհոդում QR վճարումների ոլորտում տարածաշրջանի առաջատարներից է: Մեր երկրում QR վճարումները ներդրվել են դեռեւս 2016 թվականին: QR վճարումների ներկայիս իրավիճակի եւ ոլորտի հետագա զարգացման մասին զրուցել ենք Իդրամ ընկերության տնօրեն Արսեն Քդենյանի հետ:

-Իդրամ ընկերությունը Հայաստանում QR վճարումների ներդրման առաջամարտիկն է: 2016-ից մինչեւ հիմա, ընդամենը մի քանի տարում վճարումների այս եղանակը շեշտակի աճ է գրանցել ու շարունակում է գնալով ավելի մասսայական բնույթ ստանալ: Ինչն է դրդում մարդկանց վճարել QR-ով:

-Չնայած առաջին QR-վճարումները կատարվել են 2016-ին, Իդրամը սկսել է ակտիվորեն զարգացնել QR-ենթակառուցվածքը 2019-ից, եւ ընդամենը 5 տարում այսօր արդեն ունենք աննախադեպ արդյունք: Հարյուր հազարավոր քաղաքացիներ իրենց անկանխիկ վճարումները կատարում են Իդրամ QR-ի միջոցով, ՀՀ տարածքում ավելի քան 22,000 վաճառակետերում կարելի է վճարել Իդրամ QR-ով, ընդ որում այդ բոլոր վաճառակետերում հասանելի է IDBank-ի հետ ստեղծված առաջին BNPL-ը (գնիր հիմա, վճարիր հետո)՝Rocket Line թվային ապառիկը, որից 10,000 կետերում գործում է Rocket Line 0% տարբերակը 1-12 ամիս անտոկոս վճարման ճկուն գրաֆիկով:

Եթե վիճակագրության թվերով խոսենք, ապա միայն 2024 թվականի 9 ամիսների ընթացքում QR վճարումներից օգտվել է շուրջ 200.000 Իդրամի օգտատեր, իսկ գործարքների քանակը շուրջ 4 մլն է:

Այս թվերը խոսում են այն մասին, որ QR վճարումների նկատմամբ հետաքրքրությունը գնալով ավելի է մեծանում, իսկ վաճառակետերը շահագրգռված են ունենալ QR վճարում ընդունելու հնարավորություն, քանի որ դա ոչ միայն հարմարավետություն է տալիս իրենց գնորդին, այլ նաեւ ժամանակակից գործիքների, այդ թվում՝ Rocket Line-ի շնորհիվ նպաստում է վաճառքների աճին:

-Այսօր ավելի ու ավելի հաճախ ենք լսում «Իդրամը բոլորի համար է» արտահայտությունը. նկատի ունեք, թե՞ օգտատերերի, թե՞ վաճակետերի՞ համար:

«Իդրամը բոլորի համար է» արտահայտությունը մի քանի ասպեկտով կարելի է դիտարկել, օրինակ՝ ըստ տարիքի: Ընդհանրապես, Իդրամը նախատեսված է չափահաս քաղաքացիների համար, բայց արդեն երկու տարի է, ինչ գործարկել ենք Idram Junior-ը՝ Հայաստանում առաջին ֆինանսական հավելվածը երեխաների համար ու շարունակում ենք զարգացնել այն՝ նպաստելու երեխաների ֆինանսական կրթությանը: Վերջերս, օրինակ, Idram Junior-ում Կորիզ կրթական մրցույթի հետ համատեղ գործարկել ենք Junius խաղը: Երեխաները խաղում են եւ գիտելիքներ ձեռք բերում ֆինանսների եւ տեղեկատվական անվտանգության մասին:

Ստացվում է, որ անկախ տարիքից, այո՛, Իդրամ կարող են օգտագործել բոլորը, եւ՛ չափահաս մարդիկ, եւ՛ անչափահասները:

Եթե դիտարկենք գնումների եւ վճարումների հարթակների տեսանկյունից, ապա իր օգտատեր-հաճախորդներին Իդրամն առաջարկում է 500+ ծառայություններ հավելվածում, 1000-ից ավելի առցանց կայքերում եւ խանութներում առցանց վճարման հնարավորություն, ինչպես արդեն նշեցի՝նաեւ 22,000 վաճառակետերում QR վճարումներ կատարելու տարբեր ակցիաների, լոյալության ծրագրերի շրջանակում վերջերս գործարկված idcoin-ներ կուտակելու հնարավորություն:

Եթե դիտարկենք B2B տեսանկյունից, ապա վաճառակետերին, ծառայություն մատուցողներին, առցանց կայքերին եւ խանութներին Իդրամը տրամադրում է վճարային եւ լոյալության գործիքներ՝հարմար, ակնթարթային եւ թվային ապառիկով վաճառքներ իրականացնելու համար: Մասնավորապես՝ վաճառակետերը կարող են բոնուսներ տրամադրել իրենց բոլոր կամ միայն հավատարիմ հաճախորդներին, թվային նվեր-քարտերի վաճառել եւ դրանք արդեն նվեր ստացած անձանցից որպես վճարում ընդունել: Ընդ որում՝ եւ՛ լոյալության միավորները, եւ՛ թվային նվեր քարտերը Իդրամի օգտատեր-հաճախորդը տեսնում եւ օգտագործում է անմիջապես Idram&IDBank հավելվածում:

Եթե ընդհանրացնենք, ապա այստեղ եւս Իդրամը բոլորի համար է, այսինքն՝ բոլոր հնարավոր հարթակներում գնումներ եւ վճարումներ անողների համար:

Բայց մենք չենք սահմանափակվում արդեն իսկ ստեղծված եւ իր գործունակությունն ապացուցած համակարգով: Մենք կարծում ենք, որ Հայաստանում անհոդում QR վճարումները շատ ավելի մեծ պոտենցիալ ունեն եւ արդեն ձեռնարկել ենք քայլեր ոլորտի՝էլ ավելի լայն թափով զարգանալուն նպաստելու ուղղությամբ: Խոսքը նոր հնարավորության մասին է, երբ մեր գործընկեր ֆինանսական կազմակերպությունների՝ բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների օգտատերերը, իրենց իսկ բանկի կամ վճարահաշվարկային ընկերության հավելվածների միջոցով կկարողանան վճարում կատարել՝ սքանավորելով Իդրամի QR-ը վերոնշյալ վաճառակետերից որեւէ մեկում: Սրանով «Իդրամը բոլորի համար է» արտահայտությունն էլ ավելի է ընդգծվում եւ իմաստավորվում:

ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտություն է իրականացվել սննդի իրացման ոլորտի արտադրամասերից մեկում, որի արդյունքում պարզվել են մի շարք անհամապատասխանություններ:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի տեսուչները անհատ ձեռնարկատեր Լուսինե Գուլաբյանին պատկանող մարինացված պահածոների արտադրամասում (Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ) իրականացված ստուգման ընթացքում կատարել են նմուշառում առկա արտադրանքից եւ ներկայացրել լաբորատոր փորձաքննության, հայտնում են Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից:

«Հետազոտությամբ պարզվել է, որ «Սունկ մարինացված» արտադրատեսակի նմուշը գազագոյացնող սպոր առաջացնող մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմներ (ՄԱՖԱՄ), մեզոֆիլային կլոստրիդիաներ ցուցանիշներով, իսկ «Շուշան մարինացված» եւ «Սինդրիկ մարինացված» արտադրատեսակների նմուշները գազագոյացնող սպոր առաջացնող մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմներ ցուցանիշով չեն համապատասխանում սննդամթերքի անվտանգության ոլորտի իրավական ակտերով սահմանված անվտանգությանը եւ հիգիենային ներկայացվող պահանջներին:

Գավառ քաղաքում գործող մարինացված պահածոների այս արտադրամասի գործունեությունը, ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ, կասեցվել է, սահմանվել է խախտումները վերցնելու ժամկետ», - ասված է հաղորդագրության մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ն. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ. ՍՊԱՍՎԱԾ ՄԵՆԱՀԱՄԵՐԳ

«ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏՈՆ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ»

Աշխարհահռչակ թավջութակահար, ՀՀ վաստակավոր արտիստ Նարեկ Հախնազարյանը Երեւանում հանդես կգա սպասված մենահամերգով: Համերգը կկայանա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում: Երեկոյի հատուկ հյուրն է անվանի դաշնակահար Գեորգի Չահիձեն:

«Հայաստանյան ունկնդրի հետ յուրաքանչյուր հանդիպում իսկական տոն է ինձ համար՝ լի մեծագույն պատասխանատվությամբ: Անհամբեր սպասում եմ հայ հանդիսատեսի հետ մեր հանդիպմանն ինձ շատ հարազատ Արամ Խաչատրյան համերգասրահում: Իմ շատ լավ ընկեր, փայլուն դաշնակահար Գեորգի Չահիձեի հետ ներկայացնելու ենք հետաքրքիր ծրագիր: Նրա հետ հասցրել ենք վերջերս ելույթ ունենալ Հունաստանում, եւ մեր համագործակցությունը շատ բարձր եմ գնահատում: Վստահ եմ՝ հայ հանդիսատեսը եւս անտարբեր չի մնա այս համերգի կապակցությամբ»,-նշում է Նարեկ Հախնազարյանը, ով անհամբեր սպասում է հայ ունկնդրի հետ հանդիպմանը:

Համերգային ծրագրում Շումանի, Մենդելսոնի, Կոմիտասի, Ցինցաձեի, Պիացոլայի ստեղծագործություններն են:

2011 թվականին 22 տարեկանում փայլուն հաղթանակ է տարել Չայկովսկու անվան միջազգային 14-րդ մրցույթում: Նրա ելույթները նոր թափով շարունակվեցին բազմաթիվ երկրներում որպես մենակատար, կամերային երաժիշտ: Նարեկը առինքնող արտիստ է, իսկական վիրտուոզ՝ օժտված բնածին երաժշտականությամբ եւ հանդիսատեսի հետ կապ հաստատելու բացառիկ տաղանդով:

Նարեկ Հախնազարյանը եղել է BBC New Generation Artist: Ընդգրվել է Վիեննայի Konzerthaus-ի «Մեծ տաղանդներ» համերգաշարում: «Շլացուցիչ փայլ» (The Strad), «ավելի քան հիասքանչ» (San Francisco Chronicle), «գործիքին աներեւակայելի տիրապետում» (LA Times)՝ այսպիսի արձագանքների է արժանացել Նարեկը:

Հախնազարյանը ելույթներ է ունեցել Orchestre de Paris, London Symphony, London Philharmonic, Rotterdam Philharmonic, Frankfurt Radio, Berlin Konzerthaus, Royal Stockholm Philharmonic, Chicago Symphony, LA Philharmonic, Pittsburgh Symphony, Sydney Symphony, Seoul Philharmonic, NHK Symphony եւ այլ հանրահայտ նվագախմբերի հետ (դիրիժորներ՝ Գերգիեւ, Կուպման, Էլսոփ, Լինտու, Սոխիեւ, Ռոբերտսոն, Հոնեկ, Նոզեդա, Նետոպիլ եւ այլք): Հանդես է եկել միջազգային հայտնի փառատոների շրջանակում, հեղինակավոր համերգասրահներում:

Միջազգային մրցույթների դափնեկիր է. Արամ Խաչատրյանի անվ. մրցույթ (Երեւան, 2006, 1-ին մրցանակ), Johansen International Competition (2006, 1-ին մրցանակ), Young Concert Artists International Auditions (2008, 1-ին մրցանակ) եւ այլ մրցույթներ: 2017-ին Նարեկ Հախնազարյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր արտիստի կոչում:

Հ. Բ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՇՆՈՐՀԱՆԴԵԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ԱՅՍՕՐ

Կկայանա «Ավետարան ըստ Փարաջանովի» կարճամետրաժ գեղարվեստական ֆիլմի առաջին ցուցադրությունը

Սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Կինոյի տանը (հասցե՝ Վարդանանց 18) կկայանա Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում նկարահանված «Ավետարան ըստ Փարաջանովի» վավերագրական ֆիլմի շնորհանդեսը:

Ֆիլմը նկարահանել է «Քաղաքակրթական կամուրջներ» կրթամշակութային հիմնադրամը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

Ֆիլմի մտահղացման հեղինակ եւ ռեժիսոր՝ Վիվյեն Բաստաջյան, սցենարի հեղինակներ՝ Աստղիկ Սիմոնյան եւ Վիվյեն Բաստաջյան, բեմադրող օպերատոր՝ Վահագն Տեր-Հակոբյան, կոմպոզիտոր՝ Արա Թորոսյան, նկարիչ՝ Մադլեն Խաչատրյան, ֆիլմի խորհրդատու՝ Դավիթ Մուրադյան: Գլխավոր դերակատարներ՝ Վիվյեն Բաստաջյան, Արամ Կարախանյան, Դանիել Գեղամյան:

Ֆիլմը գեղարվեստական բացահայտում է Փարաջանով մարդու եւ արվեստագետի մասին, ինչպես նաեւ գեղարվեստական վարկած, թե ինչով է Փարաջանովը համամարդկային: Սա մի ճանապարհորդություն է կինոմոգի աշխարհում, որը սովորեցնում է ապրել, ստեղծագործել եւ սիրել: Ֆիլմը եզակի է իր ժանրային եւ ռեժիսորական լուծումներով:

«ԾՆՎԵԼ ԵՄ ԱՐՑԱԽՈՒՄ»

«Արվեստ23» ՀԿ-ն հայտարարում է «Ծնվել եմ Արցախում» կրթական ծրագրի մեկնարկի մասին, որը նվիրված է Արցախում ծնված, Արցախից տեղահանված եւ ՀՀ-ում բնակվող մինչեւ 18տ. (ներառյալ) տաղանդավոր պատանի երաժիշտների համար:

«Ծնվել եմ Արցախում» ծրագրի գաղափարի հեղինակն է UNICEF-ի ազգային դեսպան, դիրիժոր Սերգեյ Սմբատյանը: Այս նախաձեռնությունը նպատակ ունի փոխակերպել Արցախի տաղանդավոր երեխաների կյանքը եւ ստեղծել արժանապատիվ եւ հաջողակ ապագա պատանի երաժիշտների համար հետեւյալ մասնագիտություններով՝ ջութակ, ալտ, թավջութակ, ֆլեյտա, հոբոյ, կլարնետ, ֆագոտ, գալարափող, շեփոր, տրոմբոն, հարվածային գործիքներ (ոչ ազգային նվագարաններ), դաշնամուր եւ տավիղ:

Ընտրված դիմորդները, ովքեր հաջողությամբ կանցնեն մրցութային փուլերը, կստանան հնարավորություն մասնակցել անվճար մասնագիտական դասերի ոլորտի առաջատար մասնագետների կողմից եւ արտասահմանյան հանրահայտ արտիստների հետ կունենան վարպետության դասեր՝ ապահովելով մասնագիտական աճ եւ զարգացում, հանդես գալ համերգային ելույթներով՝ ձեռք բերելով բեմական փորձ: Ծրագիրն առաջարկում է նաեւ օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման անվճար դասեր՝ ընդլայնելու նրանց գլոբալ հաղորդակցությունը, թանգարանային այցեր՝ խորացնելու նրանց մշակութային ըմբռնումը, եւ հրավերներ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կազմակերպվող հայաստանյան համերգներին: Բացի այդ, ծրագիրը տրամադրում է ֆինանսական աջակցություն եւ անհրաժեշտության դեպքում՝ երաժշտական գործիք, համակարգիչ եւ համացանցի հասանելիություն՝ ապահովելով, որ որեւէ խոչընդոտ չկանգնի նրանց հաջողության ճանապարհին: Ծրագիրը նախատեսվում է հինգ տարիների համար, որի ընթացքում արցախցի տաղանդավոր պատանիները կմասնակցեն միջազգային մրցույթների եւ փառատոնների:

Ծրագրին դիմելու վերջնաժամկետն է ս./թ. սեպտեմբերի 25-ը: Ծրագրին դիմելու կարգը, դիմում-հայտը եւ այլ մանրամասները ներկայացված են «Արվեստ23» ՀԿ-ի www.arvest23.org կայքէջում: Մանրամասների համար կարող եք զանգահարել 011 232 113 հեռախոսահամարով:

ՄԱՐԶԱԿԱՆ

WTA ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ԹՈՓ-50-ՈՒՄ

Կանանց թենիսի ասոցիացիան (WTA) հրապարակել է մենախաղի վարկանիշային աղյուսակի թարմացված տարբերակը: Հայաստանի ներկայացուցիչ Էլինա Ավանեսյանը բարձրացել է մեկ տեղով եւ առաջին անգամ զբաղեցնում է 50-րդ հորիզոնականը:

ԿԱՐԻԵՐԱՆ ԿԾԱՐՈՒՆԱԿԻ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Մադրիդի «Աթլետիկոյի» հոլանդացի նախկին հարձակվող Մեմֆիս Դեպայն ավարտել է իր տեղափոխությունը «Կորինտիանս»:

Բրազիլական ակումբը պաշտոնապես հաստատել է «Բարսելոնայի», «Մանչեսթեր Յունայթեդի», «Լիոնի» եւ ՊՍՎ-ի նախկին խաղացողի հետ պայմանագրի կնքումը:

Հարձակվողի պայմանագրի ժամկետը «Կորինտիանսի» հետ նախատեսված է մինչեւ 2026 թվականի ավարտը: Մեկուկես տարի խաղալով Մադրիդի «Ատլետիկոյում»՝ Մեմֆիս Դեպայը 40 խաղում դարձել է 13 գոլի եւ 2 գոլային փոխանցման հեղինակ:

ԳՈԼԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՈՎ՝ ՅԱՄԱԼԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է

«Բարսելոնայի» եւ Իսպանիայի հավաքականի եզրային հարձակվող Լամին Յամալը գլխավորում է այս օրացուցային տարվա ամենաշատ գոլային փոխանցում կատարած խաղացողների վարկանիշը:

17-ամյա խաղացողը 43 խաղում 21 գոլային փոխանցում է կատարել ակումբի եւ հավաքականի կազմում, ինչը լավագույն արդյունքն է Եվրոպայի թոփ-5 լիգաների բոլոր խաղացողների շրջանում:

Երկրորդ տեղում է «Մանչեսթեր Սիթիի» բելգիացի կիսապաշտպան Կեւին Դե Բրույնեն՝ 36 խաղում կատարելով 18 արդյունավետ փոխանցում:

Երրորդը Ալեխանդրո Գրիմալդոն է Լեւերկուզենի «Բայերի» եւ Իսպանիայի հավաքականի պաշտպանը՝ 15 գոլային փոխանցումով:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՎԱՐՏՎԵՑ 2:1 ՀԱՇՎՈՎ

Նորվեգիայի հավաքականն Ազգերի լիգայի երկրորդ տուրի շրջանակում երեկ սեփական հարկի տակ հաղթեց Ավստրիայի հավաքականին:

Հանդիպումն ավարտվեց 2-1 հաշվով՝ հօգուտ սկանդինավյան թիմի:

Նորվեգացիների կազմում նախ աչքի ընկավ Միրեն, իսկ հյուրերի կազմում պատասխան գոլը խփեց Զաբիտցերը: Հանդիպման 80-րդ րոպեին աչքի ընկավ Էրլինգ Հոլանդը՝ հաղթանակ պարգեւելով իր թիմին: Այս խմբի մյուս խաղում Սլովենիան Բենջամին Շեշկոյի հեթ-տրիկի շնորհիվ 3-0 հաշվով հաղթեց Ղազախստանի ընտրանուն:

● *Սեպտեմբերի 12-ին Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի սպասված պրեմիերա՝ «ԱՋՆԱՎՈՒՐ. ճանապահորդություն ժամանակի եւ երաժշտության միջով» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:

Երանուհի Հակոբյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ֆանի օրինակից է կնքվում ստորագրությունների իսկության ճանաչմամբ կնքվող պայմանագիրը:

Իրինա Մուքայելյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը ստորագրվում եւ ընդունվում է պետական գրանցման մեկ օրինակից, որը համարվում է այդ պայմանագրի բնօրինակը եւ պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում:

Պայմանագրի կողմի դիմումի հիման վրա՝ նրան տրամադրվում է պետական գրանցման ընդունված պայմանագրի պատճենը՝ հաստատված Կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակի կնիքով: Նման կարգով տրամադրված պատճենը եւ անշարժ գույքի ռեգիստրում պահպանվող պայմանագրի բնօրինակն ունեն հավասար իրավաբանական ուժ:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակներում անշարժ գույքի գործարքները կարող են կնքվել միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրերի հիման վրա: Եթե կողմերին անհրաժեշտ է ներառել լրացուցիչ պայմաններ, որոնք նախատեսված չեն օրինակելի պայմանագրերում, ապա նման դեպքում գործարքը կպահանջի նոտարական վավերացում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի





Մայրաքաղաքում պատերին արվող գրառումները, փաստորեն, նաեւ «սրբագրվում» են այսպես:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______
Ազգանուն՝ ______
Առաքման հասցե՝ ______
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16	+24 + 29
Կոտայքի լեռներ	+10 + 16	+27 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 23	+29 + 30
Գեղարքունիք	+11 + 16	+25 + 28
Լոռի	+ 14 + 18	+29 + 33
Տավուշ	+ 18 + 22	+30 + 33
Արագածոտնի լեռներ	+ 11 + 14	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+27 + 31

Արարատ	+ 23 + 25	+33 + 37
Արմավիր	+ 20 + 22	+30 + 32
Վայոց ձորի լեռներ	+11 + 14	+29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23	+32 + 36
Սյունիքի հովիտներ	+21 + 24	+33 + 35
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17	+29 + 32
ԼՂՀ	+ 13 + 16	+29 + 31
Երեւան	+25 + 27	+ 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*